

ԲՈՐԻՏԵՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻՆ

ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆՉԱՐ-ԽԱՆՁՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐԱԴՅԱՆ

Խորիսե Լուիս Բորիսեսի ստեղծագործությունը վերջին ժամանակների համաշխարհային գրականագիտության մեջ ամենից ավելի ուշադրության արժանացած երևույթներից է: Բորիսեսի միջազգային ճանաչումն սկսվեց 1951 թվականին՝ նրա ստեղծագործությունների ֆրանսերեն թարգմանության հրատարակման պահից. ներկայումս Բորիսեսին կարդում են ամբողջ աշխարհում մի քանի տասնյակ լեզուներով, այդ թվում՝ մի շարք գործեր նաև հայերենով: Թարգմանված առաջին գրքում զետեղված էին «Tlön, Uqbar, Orbis Tertius», «Շրջանաձև ավերակներ», «Բաբելոնյան վիճակախաղ», «Բաբելոնյան գրադարան», «Բաժանվող արահետների այգին» պատմվածքները, որոնց հիման վրա սկզբնավորվեցին Բորիսեսի ստեղծագործության շուրջ ձևավորված գրաքննադատական հիմնական տեսությունները և ընթերցողների շրջանում տարածված հեղինակի կերպարը, համաձայն որի՝ գրողը պատկերանում է իբրև լաբիրինթոսների ու զուգահեռ աշխարհների հեղինակ, երևակայական իրականի հետ համադրող փիլիսոփա, որը հաճախ օգտվում է արևելյան մտածողության արքեստիպային համակարգից:

Համաշխարհային մշակույթի հանրագիտակ լինելով՝ Բորիսեսն այն իր ստեղծագործության նյութ է դարձնում՝ նոր մոտեցմամբ լուսաբանելով տարբեր թեմաներ, դրսևորելով իրեն իբրև համադրության հիանալի վարպետ: Իրեն համարելով ոչ թե գրող, այլ ընթերցող՝ Բորիսեսը յուրահատուկ մշակման է ենթարկում համաշխարհային, մասնավորապես արևելյան մշակույթը՝ այդ առումով մեծ ազդեցություն թողնելով ավելի ուշ շրջանի բազմաթիվ հեղինակների վրա (Մարիո Վարզաս Լյոսա, Միշել Ֆուկո, Օրհան Փամուկ և ուրիշներ): Ժամանակակից գրականագիտության ոլորտում բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել Բորիսեսի արևելյան թեմատիկայով ստեղծագործություններին, մասնավորապես՝ Մարիա Իսաբել Ալերիին¹, Ալֆրեդո Կանեդոն², Պաբլո Տորնիելլին³: Հարկ է նշել, որ տվյալ նյութին առնչվող աշխատությունները ծավալվում են հիմնականում Բորիսեսի արաբական շարքի պատմվածքների շուրջ՝ շրջանցելով գրողի անդրադարձներն արևելյան մյուս կրոնական ուսմունքներին:

Իբրև պատմվածքագիր, էսսեագիր՝ Բորիսեսն օգտագործում է բազմաթիվ մերձավորարևելյան և հեռավորարևելյան աղբյուրներ, և դրանց

¹ Տե՛ս **María Isabel Ackerley**, Borges, el Islám y la búsqueda del otro. Eikasia. Revista de Filosofía, № 7, Oviedo, 2006:

² Տե՛ս **Alfredo Canedo**, Borges y el pensamiento oriental, Espéculo, Revista de Estudios Literarios, № 32, Madrid, Abril 2006. - <http://www.ucm.es/info/especulo/numero32/bororien.html>

³ Տե՛ս **Pablo Torielli**, Algunos motivos árabes e islámicos en la obra de Borges. University of Pittsburg, Borges Studies Online, 2001. - <http://www.borges.pitt.edu/bsol/pdf/tornielli.pdf>

թվում, անշուշտ, գերազանցում են առաջինները, հատկապես Յին Կտակարանը, Ղուրանը կամ «Չագար ու մի գիշերներ» շարքը: Այնուամենայնիվ, Բորխեսի սեփական գեղագիտությանն առավել հարազատ են չինական և հնդկական, մասնավորապես բուդդիստական փիլիսոփայության և բանարվեստի գաղափարական ու ոճային առանձնահատկությունները:

Չարցագրույցներում, հողվածներում, պատմվածքներում Բորխեսը բազմիցս խոստովանել է, որ իր համար փիլիսոփայությունն ու արվեստը հավասարազոր են և գրեթե նույնական, և իր բազմամյա փիլիսոփայական ուսումնասիրությունները՝ այդ թվում նվիրված քրիստոնեական աստվածաբանությանը, բուդդիզմին, դաոսիզմին և այլն, «ուղղված են եղել գեղարվեստական երևակայության նոր հնարավորությունների որոնմանը»⁴: Արևելյան աղբյուրների ուսումնասիրությունը Բորխեսին հետաքրքրում էր հատկապես այն առումով, որ գրողը ձգտում էր իր ստեղծագործությունը վերածել արևելյան և արևմտյան փիլիսոփայությունների համապարփակ գրադարանի: Իր գործերում Բորխեսը հաճախ է անդրադառնում ճապոնացի ականավոր գրող Ակուտագավա Ռյունոսկեի ստեղծագործությանը, որը գրավում է նրան և՛ որովհետև Ակուտագավայի ոճը միշտ պահպանում է թափանցիկությունը, և՛ որովհետև այն արևելյան և արևմտյան մշակույթների միաձուլման օրինակ է:

Բացի երկու մշակույթների միաձուլման գաղափարից՝ Բորխեսի հետաքրքրվածությունը հին արևելյան բանահյուսությամբ, գրականությամբ պայմանավորված է դրանց բնորոշ թեմատիկ և ոճային, բանարվեստային առանձնահատկություններով: Իբրև օրինակ՝ նկատենք, թե ինչպես է բնութագրում Բորխեսը չինական հեքիաթը: Ի տարբերություն արաբական բանահյուսության չափազանցված համեմատությունների՝ չինական և հետագայում նաև հատկապես բուդդիստական պատմողական ոճը մոտ է կանգնած իրականությանը. անգամ հրաշքների առկայության դեպքում դրանք ոչ թե կախարդական, այլ առօրեական բնույթ ունեն: «Չինական կախարդական և ազգային հեքիաթները» պատմվածքում Բորխեսն ընդգծում է արևելյան կախարդական հեքիաթի և արևմտյան հեքիաթի ժանրի տարբերությունները. եվրոպական, ինչպես նաև արաբական կախարդական հեքիաթները լեցուն են պայմանականություններով: Դրանց մեջ գերիշխում է երրորդության սկզբունքը. քույրերից երկուսը չար են, մեկը՝ բարի, թագավորը երեք որդի ունի, երեք մարդկանցից հանելուկը բացահայտում է հենց երրորդը: Արևմտյան հեքիաթը ճշգրիտ է, բաժանված հավասար մասերի՝ ի տարբերություն չինական կախարդական հեքիաթի, որը ակնհայտորեն խախտում է կանոնները: Սկզբում այն անհեթեթության է նման, սակայն հետագայում հասկանալի է դառնում, որ պատմողը հավատում է հրաշքներին և ներկայացնում է դրանք: Փաստորեն, ըստ Բորխեսի, հեքիաթն արտացոլում է իրականությունը, որը ևս երբեմն ճշգրիտ չի լինում: Իրականության նմանատիպ արտացոլումը իր իսկ՝ Բորխեսի գեղագիտական սկզբունքներից է:

Բորխեսի վրա Արևելքի թողած ազդեցության մյուս կարևոր արտահայտությունը հիմնական խորհրդանիշերի ընտրությունն է: Ժամանակը, լաբի-

⁴ Тертерян И. Человек, мир, культура в творчестве Хорхе Луиса Борхеса // Борхес Х. Л. Проза разных лет. М., 1984, с. 8.

րինթոսը, տարածությունը, երազը, հայելիները, հավերժությունը և մահը գրողի ստեղծագործության մշտական թեմաներից են. այս խորհրդանիշերի խորքային իմաստները Բորխեսը հաճախ գտնում է հին արևելյան տեքստերի քննության միջոցով, որոնցից հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում «Կարմիր տաղավարի երազը»: Վերջինս չինական գրականության ամենահայտնի և հիմնավոր ստեղծագործություններից է, որը միշտ հիացմունք է պատճառել արգենտինացի գրողին: Այս եզակի վեպը, որն անգլիացի չինագետ Չերբերտ Ա. Ջայլսը բնորոշում է որպես «չինական վեպի նվաճած բարձրագույն գագաթ», սկզբում վերագրվել է անհայտ հեղինակի գրչին: 1917-ին Յու Շիհը վերծանում է հեղինակի անունը՝ Ցաո Սյուեցին կամ Ցաո Չան, որ հետագայում հաստատում է Արթուր Վեյլին՝ անգլերեն թարգմանության հեղինակը, որին Բորխեսն ակնածանքով էր վերաբերվում: Գրքի ծնունդը վերագրվում է 1645 թվականին Չինական կայսրությունը գրաված բարբարոս մանջուրներին, որոնք, սիրահարվելով տեղի մշակույթին, սկսում են զարգացնել արվեստն ու գրականությունը. բազմաթիվ նոր գրքերի թվում ստեղծվում է Ցաո Սյուեցինի «Կարմիր տաղավարի երազը» հայտնի վեպը, որը գերմաներեն է թարգմանում Ֆրանց Կունը: Արևմուտքում դա երեքհազարամյա գրական ավանդույթ ամփոփող գրքի առաջին թարգմանությունն է դառնում: Բնագիրը՝ «գրված անչափ գեղեցիկ լեզվով և ակնառու բանաստեղծական ու հոգեբանական տաղանդով, այնպիսի հատվածներ է պարունակում, որոնք Բորխեսի վրա խոր ազդեցություն են թողել երևակայության, գերբնական թեմաների, հոգևոր ու երկրային աշխարհների փոխհարաբերության տեսակետից»⁵: Վեպում դրվագներ կան ինքն իրեն երազում հանդիպող Պաո-Յուի մասին, որ հատկապես գրավում է Բորխեսին, որի ստեղծագործության մեջ երազի թեման կենտրոնականներից է: Գրողն անդրադառնում է Պաո-Յուի երազին տարբեր գործերում՝ բնագրային ոչ մի փոփոխություն չկատարելով: Բորխեսի գրվածքներում մի քանի անգամ կրկնվում է չինացի մտածող Չժուան Ցզիի մետաֆիզիկական երազը. նա տեսել էր, որ ինքը թիթեռի է վերածվել, և արթնանալով չէր կարողանում հասկանալ, թե արդյոք ինքը մարդ է, որը երազում իրեն թիթեռ է տեսել, թե թիթեռ, որը երազում իրեն մարդ է տեսել: Չժուան Ցզիի այս երազը Բորխեսը մեկնաբանում է պլատոնյան մոտեցմամբ, ըստ որի՝ ընդհանուրի գոյությունը ենթադրում է անվերջի գոյությունը, այլ կերպ ասած՝ տիեզերքի համընդհանրությունը դրա անվերջության նախանշանն է:

Անհերքելի է գրելաոճի տեսակետից արևելյան գրականության ազդեցությունը Բորխեսի ստեղծագործության վրա: «Ելելու փոխարեն նա գերադասում էր ակնարկել: Նրա բոլոր գործերը՝ պատմվածքները, բանաստեղծությունները կամ հոդվածները, լի են հուշումներով, կիսատ անվանված իրերով, փոխված անուններով»⁶: Լինելով յուրացման հզոր ընդունակությամբ օժտված ընթերցող՝ Բորխեսը հրաշալի զուգակցում է տարբեր ժամանակները, փոխհարաբերում է մեջբերումներն ու հղումները՝ հիմնվելով ինչպես իրականության, այնպես էլ հաճախ հորինված իրականության վրա:

⁵ Մեջբերումն ըստ՝ **Oswaldo Svanascini**, *Borges y las culturas orientales*. Cuadernos Hispanoamericanos, № 505-507, 1992, էջ 348:

⁶ **Estela Canto**, *Borges a contraluz*. Buenos Aires, 1999, p. 7.

Նրա պատմվածքները յուրատեսակ ծնունդ են նուրբ երևակայության, որը թվացյալը վերածում է իրականի, որ կատարվում է տարբեր բանարվեստային հնարքների միջոցով. այդպիսիք են, օրինակ, բորխեսյան պատմվածքներում հաճախակի հանդիպող հղումները գրականության հորինված ցանկերին, նաև փակագծերում բերվող պարզաբանումները, ճշգրտումները: Բորխեսի բանարվեստում իրականը հագեցվում է խորհրդանշական իմաստով, խորհրդանշականն իրական տեսքով է ներկայանում, որին որպես հիմնական արտահայտչամիջոց ծառայում է փոխաբերությունը: Հատկապես ստեղծագործության ուշ շրջանում Բորխեսը յուրացնում է արևելյան գրականությանը բնորոշ արտահայտչամիջոցների համակարգը: «Հեռանալով ավանգարդիզմից, – նշում է գրականագետ Ի. Տերտերյանը, – Բորխեսը հրաժարվեց նաև անսպասելի տեսողական արտահայտչամիջոցներից, փոխարենը նրա արձակում, իսկ այնուհետև նաև պոեզիայում հայտնվեց մեկ այլ արտահայտչամիջոց՝ ոչ թե վիզուալ, այլ ինտելեկտուալ, ոչ թե կոնկրետ, այլ վերացական: Ոչ թե պատկերները, տողերը, այլ ամբողջական ստեղծագործությունները վերածվեցին փոխաբերությունների՝ բարդ, բազմատարր, փոխաբերություն-խորհրդանշերի»⁷: Այդպիսի բազմատարր փոխաբերություն-խորհրդանշեր են չինական մշակույթին և փիլիսոփայությանն առնչվող «Բաժանվող արահետների այգին», «Պարիսպն ու գրքերը» պատմվածքները, ինչպես և աշխարհագրական առումով ընթերցողին Հնդկաստան տեղափոխող «Կապույտ վագրերը» պատմվածքը: Ըստ սյուժեի՝ պատմվածքի գլխավոր հերոսը, որը երկար ժամանակ հետաքրքրվել է կապույտ վագրերով, տեղեկանում է, որ Գանգեսի դելտայի շրջանում հայտնաբերել են ինչ-որ կապույտ ցեղ: Տեղի հնդիկ բնակչության հանդեպ հերոսի տածած նախնական մտավախությունը հուշում է ձեռնարկի վտանգավոր վախճանը, ընդ որում, մահմեդականությունը որակվում է որպես հուդայականությունից ծագած ամենաաղքատ կրոն. «Միշտ ավելի լավ հարաբերություններ են ունեցել մուսուլմանների հետ, թեև իսլամը, գիտեմ, հուդայականությունից ծագող կրոններից ամենաաղքատն է»⁸: Այս պատմվածքի կենտրոնում նույնպես պատկերային փոխաբերություն կա. Հնդկաստանում հերոսը բացահայտում է, որ «կապույտ վագրերն» իրականում մոզական քարեր են: Քարերի փոխաբերության միջոցով Բորխեսը միավորում է իր ստեղծագործության երեք կենտրոնական թեմաները՝ անվերջության թեման, հրաշքից հրաժարվելու թեման և մոզական առարկայի, մասնավորապես քարի թեման, որը մինչ այդ դրսևորվել էր «Ձահեր» պատմվածքում: Այս դեպքում անվերջությունն արտահայտված է քարերի անհաշվելիության միջոցով. սկզբում թվում է, թե դրանք տասից ավելի չեն կարող լինել, այնուհետև անբացատրելի կերպով սկսում են ավելանալ և նվազել, և դրանք հաշվելու հերոսի բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: «Դրանք մի կույտ դարձրի ու փորձեցի մեկ առ մեկ հաշվել: Պարզվեց՝ այդ հասարակ գործողությունը կատարելն անհնար է»⁹: Այս պատմվածքում

⁷ Тертерян И., նշվ. աշխ., էջ 7:

⁸ Jorge Luis Borges, Obras completas, III. Barcelona, 1991, p. 380.

⁹ Նույն տեղում, էջ 382:

վառ կերպով արտահայտված է հրաշքի հանդեպ մահմեդական և հնդկական արձագանքների հակադրությունը. եթե մահմեդականներն անվարան ընդունում և պաշտամունքի առարկա են դարձնում հրաշքը, ապա հնդիկների կողմից այն կասկածով և երկյուղով է ընկալվում, մարդիկ նախընտրում են չիմանալ դրա մասին, հրաժարվում են դրանից: «Կապույտ վագրերը» պատմվածքի հերոսը հրաժարվում է հրաշքից՝ դրա շնորհիվ պահպանելով իր «ես»-ը, չհանդգնելով, սակայն, կատարել սեփական «ես»-ից բաժանող վերջին քայլը:

Այդ վերջին քայլը կատարելու անհրաժեշտությունն արտահայտված է Բորխեսի՝ բուդդիզմին նվիրված գործերում: Հայտնի է, որ Բուդդան գրվածքներ չի թողել, սակայն բուդդիզմի կանոնական գրքերը ծնունդ են տվել բազում ուսմունքների, որոնք համախմբված են ցավի, ճանապարհի և փրկության թեմաների շուրջ: Բորխեսին գրավում է փրկության բուդդիստական մոդելը, որին հնարավոր է հասնել միայն գիտակցված ընտրության միջոցով: «Ինձ համար բուդդիզմը թանգարանային նմուշ չէ. փրկության ճանապարհ է»¹⁰: Ըստ բուդդիստական ըմբռնման՝ մարդն անհատական, իրական սուբյեկտ չէ, նրա հետ կատարվող ամեն ինչ պատրանք է: Բորխեսն իր արձակ և բանաստեղծական գործերում ընդգծում է բուդդիզմը որպես սկիզբ և վերջ չունեցող մի երևույթ, որում հնարավոր է տարրալուծել «ես»-ը: Ըստ բուդդիստական մոտեցման՝ անհեթեթ է նպատակներին հավատալ, քանի որ դրանք գոյություն չունեն, և հիմարություն է որևէ գործողության մեջ իմաստ տեսնելը: Համաձայն այս սկզբունքների՝ Բորխեսը վկայակոչում է համաշխարհային ոգին, որը «ճանապարհորդ է բնության բոլոր թագավորությունների մեջ, չունի անցյալ ու ապագա և միշտ կապված է աստվածային ոգուն»¹¹: Կարելի է ասել, որ Բորխեսը յուրացրել է ոչ միայն բուդդայական, այլև ալեքսանդրյան և պլատոնյան մտածելակերպը, որի համաձայն՝ «ընտրելու ազատությունը ոչ թե մարմնի, այլ հոգու հատկություն է»¹²:

Բորխեսը բուդդիզմին ծանոթացել էր անգլիացի Ալեքս Համիլտոնի՝ հնդկագիտության հիմնադիրներից մեկի գրքերից, ինչպես նաև Գյոթեի, Շլեգելի, Շոպենհաուերի, Վագների և Նիցշեի ստեղծագործությունների միջոցով: Դրանցում նա գտել էր մտավոր կենտրոնացման, մարդկային յուրաքանչյուր գործողության անավարտության և անկատարության գաղափարը: Այդ ամենը հանգեցնում է այն եզրակացության, որ կյանքը ոգեղեն է, գոյություն չունեցող մարմին: «Յոթ գիշեր» շարքի «Բուդդիզմ» էսսեում Բորխեսն անդրադառնում է բուդդիստական աշխարհատեսությանը, որում աշխարհը մտքի երազ է համարվում, «մայա»՝ խաբկանք: Առաջին հերթին գրողը կարևորում է բուդդիզմի հանդուրժողականությունը: «Երբ Հնդկաստանի կայսր Աշոկան բուդդայական դարձավ, ոչ ոքի չփորձեց պարտադրել իր նոր կրոնը» (էջ 26): Այնուհետև Բորխեսին գրավում է այն փաստը,

¹⁰ **Խորխե Լուիս Բորխես**, Բուդդիզմ, «Գարուն», 2009, № 11-12, էջ 34: (Այսուհետև սույն հրապարակումից կատարած մեջբերումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով էջը):

¹¹ Տե՛ս **Alfredo Canedo**, նշվ. աշխ., <http://www.ucm.es/info/especulo/numero32/bororien.html>

¹² Նույն տեղում:

որ բուդդիզմը մյուս կրոնների, մասնավորապես մահմեդականության պես դյուրահավատություն չի պահանջում: «Եթե մուսուլման ենք, պետք է հավատանք, որ Աստուծուց (ըստ ընդունվածի՝ Ալլահից – Ն. Գ.-Խ., Գ. Ա.) բացի այլ աստված չկա, և Մուհամմեդն է նրա մարգարեն: Կարող ենք լավ բուդդայական լինել ու ժխտել, որ Բուդդան գոյություն է ունեցել» (էջ 27): Իրականում բուդդիզմը կարևորություն չի տալիս պատմական փաստերի հանդեպ հավատին. այս դեպքում կարևորն ուսմունքին հավատալն է: Կրոն լինելուց բացի՝ բուդդիզմն առասպելաբանություն է, տիեզերագիտություն, մետաֆիզիկական համակարգ, որի կենտրոնում մարդու ազատ ընտրության գաղափարն է: Բուդդայականները գտնում են, որ ճգնակեցությունը կարող է օգուտ բերել, բայց կյանքը փորձած լինելուց հետո. նրանք չեն կարծում, որ որևէ մեկը պետք է սկսի ինչ-որ բանից հրաժարվելուց: «Պետք է մինչև հատակ քանել կյանքն ու հետո հուսախաբվել դրանից՝ բայց ոչ առանց այն ճանաչելու» (էջ 29):

Հայտնի է, որ Բուդդան կարող էր հրաշքներ գործել, բայց, ինչպես և Հիսուս Քրիստոսը, նրան տիաճություն էին պատճառում հրաշքները. դա նրան գռեհիկ ցուցադրականություն էր թվում: Ըստ ավանդության՝ Բուդդայի միակ հրաշքը քաղաքավարության հրաշքն է, երբ երեսուներեք աստվածներից յուրաքանչյուրը երկնքից նրա վրա մեկական ստվեր է ձգում, և Բուդդան, չցանկանալով արհամարհել աստվածներից ոչ մեկին, բազմապատկվում է երեսուներեք Բուդդաների, այնպես որ աստվածներից յուրաքանչյուրը վերևից տեսնում է իր ուղարկած ստվերով պաշտպանված մի Բուդդայի:

Համաձայն բուդդայականների՝ ազատ, հրաշքներով չպարտադրված հավատի շնորհիվ մարդը սեփական կամքով պետք է հասնի «ես»-ից հրաժարման, որը նիրվանայի տանող միակ ճանապարհն է: «Հենց որ հասկանանք, որ եսը գոյություն չունի, չենք մտածի, որ եսը կարող է երջանիկ լինել, կամ որ մեր պարտքն է նրան երջանկացնելը» (էջ 34): Այս առումով ուշագրավ է բուդդիզմի կապը հնդկական ավանդական կրոնական ուսմունքների հետ. «Հնդիկներն ասում են, որ կյանքի նպատակը երջանկությունը չէ, այլ ճանաչողությունը, որ միայն ճանաչողության միջոցով կարող ենք հասնել երջանկության»¹³: Ինչ վերաբերում է նիրվանային, բառը թարգմանաբար նշանակում է «մարում, անջատում»: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է արգենտինացի գրողը, Բուդդայի ժամանակակիցների կարծիքով անջատման գաղափարը նույնը չէր, ինչ հիմա, որովհետև համարվում էր, որ բոցն անջատվելով չի անհետանում, այլ շարունակում է ապրել, հարատևում է ուրիշ վիճակում, ուստի նիրվանան ոչ թե մարում է նշանակում, այլ կյանքի շարունակություն մեկ այլ, մարդկային գիտակցության համար անընկալելի ձևի մեջ: Բուդդայականները ոչ թե հենց վերամարմնավորման են հավատում՝ հոգու վերամարմնավորմանը, այլ կարմային, «որը մի տեսակ մտավոր օրգանիզմ է՝ անթիվ անգամ վերամարմնավորվող» (էջ 31): Այսինքն՝ յուրաքանչյուր անհատ իր կյանքի ընթացքում ստեղծում է իր կարման, որն այնուհետև ժառանգում է մեկ ուրիշը:

¹³ Estela Canto, նշվ. աշխ., էջ 7:

Բուդդայի լեգենդից Մայա թագուհու երազի դրվագն ընդգրկված է Բորխեսի «Յոթնամյա տարիների գրքում»: Քրիստոսի ծննդից հինգ հարյուր տարի առաջ Մայա թագուհին երազում տեսնում է, թե ինչպես է ճերմակ փիղն իր մարմինը մտնում: «Փիղը վեց ժանիք ուներ, որոնք համապատասխանում են տարածության հնդկական վեց չափումներին՝ վերև, ներքև, ետ, առաջ, աջ, ձախ»¹⁴: Բորխեսն անդրադառնում է բուդդիստական սիմվոլիկային: Յոթնամյա տարիներից փիղն ընտանի կենդանի է, սպիտակ գույնը հեզություն է խորհրդանշում, իսկ վեց թիվը սրբազան է: Աստղաբաշխները գուշակում են, որ Մայան երեխա է լույս աշխարհ բերելու, որը դառնալու է երկրի կայսրը կամ մարդկության ամոքիչը: Բուդդիստական ուսմունքի սկզբունքներն արտացոլված են նույն գրքի մի շարք այլ էականների բնութագրերի միջոցով:

Առհասարակ Բորխեսի նախասիրություններից մեկն ուսանողների և ընկերների հետ տարբեր անթուղոգիաներ կազմելն էր. հենց այդպես է ստեղծվում «Յոթնամյա տարիների գիրքը» (1967), որտեղ հատվածներ են հավաքված հին պարսկական, հին հնդկական և հին չինական գրքերից՝ արաբական հեքիաթների հարևանությամբ: Բացի դրանից՝ «Յոթնամյա տարիների գիրքը» շարքը ներկայացնում է արևելյան և արևմտյան մշակույթների միաձուլման և բաժանման թեման: Այն յուրօրինակ է ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքով: Բորխեսը հանդես է գալիս իբրև տարբեր առասպելների հավաքող, և գիրքն առաջին հայացքից գրեթե չի տարբերվում հանրագիտարանից: Շարքը տարբեր պատմություններ է ներառում հորինված կենդանիների բազմազան տեսակների մասին, և պատմվածքները դասավորված են այբբենական կարգով: Սակայն տեղեկատվական ձեռնարկ լինելուց զատ՝ այս գիրքն ազգային բանահյուսության առանձնահատկությունների հարուստ շտեմարան է, և ըստ այդմ՝ տարբեր գաղափարախոսությունների հիմնական սկզբունքները ներկայացնելու հզոր եղանակ:

Յոթնամյա տարիներից հորինված էականները խտացնում են հնդկական, իսկ այնուհետև նաև բուդդիստական աշխարհայացքին բնորոշ իմաստությունը և բարոյականությունը: Այսպես, Սիմուրգն անմահ թռչուն է, որն ապրում է Գիտության ծառի ճյուղերին: Վիշնուն՝ բրահմայական պանթեոնի երրորդության երրորդ աստվածը, սովորաբար թռչուն է Գարուդա թռչնի վրա: Ըստ ավանդության՝ այդ իմաստուն թռչունն է մարդկանց պատմել տիեզերքի ծագման մասին, սովորեցրել նրանց պաշտամունքային ծեսերը, արևից և լուսնից սերող անվանի տոհմերի ծագումը, Ռամայանայի սյուժեն, տաղաչափությունը, քերականությունը և բժշկությունը: Բարոյականության տեսանկյունից ուշագրավ է Բորխեսի մեջբերած հետևյալ դրվագը: VII դարի մի թագավորի ստեղծած դրամայում՝ «Նազանանդա»-ում («Օձերի ուրախություն»), Գարուդան ամեն օր օձ է սպանում և ուտում, մինչև որ մի բուդդայական արքայազն սովորեցնում է նրան պահքի առաքինությունը: Վերջին գործողության մեջ թռչունը զղջում է և վերակենդանացնում օձերին:

Բուդդիզմին հատուկ կարեկցանքի գաղափարը դրսևորված է նաև

¹⁴ Jorge Luis Borges, El libro de los seres imaginarios. Barcelona, 1982, p. 27.

նագաների դրվագում: Դրանք օձեր են, սակայն երբեմն մարդու կերպարանք են ընդունում: Ըստ բուդդայական մի լեզենդի՝ Բուդդան թզենու տակ մտորելիս ընկնում է քամու և անձրևի տակ, և խղճահարված նագան յոթ անգամ փաթաթվում է նրա շուրջը և իր գլխով ամպիովանի է ստեղծում Բուդդայի գլխավերևում: Ըստ Բորխեսի՝ հոլանդացի արևելագետ Յ. Գ. Կերնը իր «Յնդկական բուդդիզմի դասագրքում» նագաներին ամպերի ձևով է պատկերում: Այս կապակցությամբ արժե նշել, որ ամպի խորհրդանիշը կենտրոնական է նաև հուդայական և հետագայում քրիստոնեական խորհրդանիշերի շարքում: Եհովան ամպի տեսքով է հայտնվում Հին Կտակարանի տարբեր դրվագներում, ամպը հանդես է գալիս իբրև աստվածային ներկայության նշանակիչ: Հորի գրքում ամպն ամենագո իմաստության խորհուրդն ունի, Տերը խոսում է «փոթորկի ու ամպի միջից» (Հոր, 38:1), Սողոմոնի օրոք տաճարը լցվում է ամպով՝ փառքով. «Երբ քահանաները ելան սրբարանից, ամպ լցուեց Տիրոջ տունը, եւ քահանաներն ամպի պատճառով չէին կարողանում սպասաւորութիւն անել, քանզի Տիրոջ փառքը լցրել էր տունը» (Թագաւորութիւններ Գ, 8:10-11): Ըստ Ավետարանի՝ Քրիստոսն իր վերջին գալստյան ժամանակ ամպերի վրայով է գալու. «Եւ ապա երկնքի վրայ մարդու Որդու նշանը պիտի երեւայ, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն եւ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորութեամբ եւ բազում փառքով» (Մատթէոս, 24:30), Հայտնության գրքում ասվում է. «Ապա ես տեսայ մի սպիտակ ամպ. եւ ամպի վրայ նստել էր մեկը՝ նման մարդու Որդուն. նա իր գլխին ունէր ոսկէ պսակ, եւ իր ձեռքին՝ սրած գերանդի» (Յայտնութիւն, 14:14):

«Հորինված էակների գրքում» հարյուրգլխանու կերպարով կրկին արտահայտված է բուդդայական քաղաքավարությունը. հարյուրգլխանին ծուկ է, որի կարման հերթական վերամարմնավորման է ենթարկվել: Ըստ Բուդդայի չինացի կենսագիրներից մեկի՝ մի անգամ Բուդդան ձկնորսների է հանդիպում, որոնց բռնած վիթխարի ձուկը կապկի, շան, ձիու, աղվեսի, խոզի, վագրի և այլ, ընդհանուր թվով հարյուր գլուխ է ունենում: Բուդդան աշակերտներին բացատրում է, որ նախկին վերամարմնավորումներից մեկի ժամանակ հարյուրգլխանին մի բրահման է եղել, որը բոլորին գերազանցել է սրբազան տեքստերի իմացությամբ: Երբեմն ընկերները սխալվել են, և նա նրանց անվանել է «կապկի գլուխ», «շան գլուխ» և այլն: Մահից հետո այդ բառերի կարման ստիպել է նրան վերածնվել ծովային հրեշի մարմնով, որն իր ուսերին կրում է բոլոր այն գլուխները, որոնց անունները չարությամբ տվել է իր ընկերներին:

Վերջապես, «Հորինված էակների գրքի» երկնային եղնիկը բուդդիզմին հատուկ լույսի մշտական որոնման կրողն է: Ըստ Բորխեսի՝ ոչ ոք չի տեսել այդ եղնիկներին, բայց հայտնի է, որ նրանք ապրում են գետնի տակ և ուրիշ ցանկություն չունեն՝ բացի արևի լույսը տեսնելուց: Նրանք խոսել գիտեն և աղաչում են հանքափորներին, որ իրենց օգնեն դուրս գալ: Սկզբում թանկարժեք մետաղների խոստումներով են փորձում կաշառել, ապա այնքան են հոգնեցնում մարդկանց, որ վերջիններս նրանց փակում են հանքի պատերի մեջ, ոմանք նույնիսկ տանջում են եղնիկներին: Բորխեսին գրավում է

չինական այս առասպելը, քանի որ եղնիկները խորհրդանշում են մարդու մեջ անխոնջ հոգևոր տարրի, լույսի պահանջի առկայությունը, որը հաճախ ճնշվում է հենց իրենց՝ մարդկանց թուլության պատճառով:

Բորխեսի ստեղծագործությունները հաստատում են հոգևոր կատարելագործման հնարավորությունը, սակայն մասնավորապես բուդդիստական ուսմունքի նմուշներին նրա կատարած անդրադարձները ցույց են տալիս, որ վերելքը պայմանավորված է սեփական ընտրությամբ: Ըստ Բորխեսի՝ հավատը կայանում և ուժ է առնում բացառապես ազատ ընտրության միջոցով: Ինչպես հանդուրժողականությունը, այնպես էլ հատկապես սեփական ընտրությունն այն հիմնավոր գաղափարներն են, որոնցով Բորխեսի պատկերացմամբ հարազատանում են արևելյան բուդդիզմը և արևմտյան քրիստոնեությունը: Իբրև վերջինս արտահայտող մի զուգահեռ՝ արժե հիշել գրողի լավագույն պատմվածքներից մեկը՝ «Պարացելսը և վարդը»: Եվեյցարացի ալքիմիկոս Պարացելսը փորձում է բացատրել իր մոտ սովորելու եկած աշակերտին, որ փիլիսոփայական քարը ոչ թե նպատակակետ է, այլ միաժամանակ ելակետ և ճանապարհ, սակայն անհամբեր երիտասարդն ուզում է անմիջապես տեսնել նպատակակետը, հավատալու համար նա հրաշք է պահանջում Պարացելսից, սակայն վերջինս բուդդիստական մոտեցման օրինակով հրաժարվում է հրաշքի միջոցով աշակերտին գրավելուց. «Հրաշքը քո փնտրած հավատը չէր տա»¹⁵:

Ըստ Ֆ. Դոստոևսկու Մեծ ինկվիզիտորի հայտնի խոսքերի՝ աշխարհում ընդամենը երեք ուժ կա, որոնք ընդունակ են ընդմիշտ հաղթահարելու և գերելու մարդկանց խիղճը՝ նրանց երջանկացնելու համար. այդ ուժերն են հրաշքը, գաղտնիքը և հեղինակությունը: Բորխեսի՝ մահմեդական, հուդայական և բուդդայական Արևելքին նվիրված բազմաթիվ ստեղծագործություններից կարելի է բխեցնել հետևյալ եզրակացությունը. եթե արաբական աշխարհը հենված է հեղինակության ուժի վրա, իսկ հրեաները պաշտամունքի առարկա են դարձնում գաղտնիքը, ապա բուդդիզմը մեկ հրաշք է ընդունում. մարդու ազատ ընտրության միջոցով Աստծո հավերժորեն կայանալու հրաշքը:

НАТАЛЬЯ ГОНЧАР-ХАНДЖЯН, АСМИК АМИРАГЯН – Обращение Х. Л. Борхеса к буддийскому Востоку. – Произведения Х. Л. Борхеса, одного из крупнейших писателей и мыслителей XX столетия, переведены на множество языков, в том числе и на армянский. Творчество его уже более полувека привлекает пристальное внимание мирового литературоведения, изучается как с точки зрения идейно-мировоззренческой, этико-философской, культурологической, так и в аспекте своеобразия художественного строя, жанрового состава, новаторской поэтики. Идеино-художественный мир Борхеса вбирает в себя, соотносит и сочетает многообразный культурный опыт и традиции Запада и Востока. В его разножанровых текстах с их сюжетами, образами, символикой отражается острый интерес к восточным архетипам, мифам, религиозным учениям, философии, литературе. Как писателю и мыслителю Борхесу наиболее близок буддизм, роднящийся с христианством идеями терпимости, свободы выбора, духовной стойкости и просветления.

¹⁵ **Jorge Luis Borges**, Obras completas, III. Barcelona, 1991, p. 389.

NATALYA GONCHAR-KHANJYAN, HASMIK AMIRAGHYAN – *References of J. L. Borges to the Buddhist East.* – The works of J. L. Borges, one of the most eminent and influential writers and philosophers of the 20th century, have been translated into many dozens of languages (some of his short stories and essays have been translated into Armenian as well), attracting the undivided attention of world literary critics for more than half a century. The study of his works is mainly based on the following aspects: ideology, world outlook, ethics and philosophy, culturology, as well as peculiarity of literary structure, variety of genres, innovatory writing style. The ideological-artistic world of Borges is comprehending the diversified cultural experience and traditions of the East and the West, correlating and combining them with one another. The texts of different genres, the topics, images, symbolics are reflecting the interest in the Eastern archetypes, myths, religious doctrines, philosophy and literature. As a writer and philosopher, Borges is most fond of Buddhism, which draws closer to Christianity due to ideas of tolerance, freedom of choice, spiritual firmness and illumination.